Անցումային շրջանում դեղերի տրամադրման Medicare-ի քաղաքականությունը

Ներածություն

Մենք ցանկանում ենք, որպեսզի Medicare-ի անդամները հասանելիություն ունենան իրենց անհրաժեշտ դեղերին, հատկապես մի պլանից մյուսն անցնելիս կամ երբ դեղերի տեղեկատուում փոփոխություններ են կատարվում:

Սույն անցումային քաղաքականությունը վերաբերում է Blue Shield of California Medicare Advantage-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի (MAPD) բոլոր պլաններին և դեղատոմսով բաց թողնվող դեղերի առանձին պլաններին (PDP):

Այս փաստաթղթում ներկայացված է մի դեղից մյուսն անցնելու Medicare-ում ընդունված գործընթացը, որը վերաբերում է.

- Այն անդամներին, ովքեր օգտագործում են՝
  - D բաժնի դեղեր, որոնք ներառված չեն մեր դեղերի տեղեկատուում
  - Մեր դեղերի տեղեկատուում ներառված D բաժնի դեղեր, որոնց համար պահանջվում է նախնական թույլտվություն, փուլային թերապիա կամ գործում է քանակական սահմանափակում
  - Վերոնշյալ D բաժնի դեղերը, որոնց համար տարբերակներ չեն կարող առաջարկվել դեղատանը: Դա վերաբերում է ինչպես նոր, այնպես էլ ընթացիկ դեղատոմսային դեղերին:
- Ստորև նշված անդամներին՝
  - Ամենամյա ընտրական ժամանակաշրջանում գտնվող նոր անդամներ
  - Նոր իրավունակ անդամներ, որոնք անցնում են մեկ այլ ապահովագրական ծածկույթի պայմանագրային տարվա սկզբում
  - Անդամներ, ովքեր պայմանագրային տարվա մեկնարկից հետո անցնում են մի պլանից մյուսին
  - Երկարատև խնամքի (LTC) հաստատություններում գրանցված անդամներ
  - Անդամներ, որոնց վրա ազդել են պայմանագրային մի տարուց մյուսն անցնելիս դեղերի տեղեկատուում կատարված փոփոխությունները

Նշում. Մեր անցումային քաղաքականությունը վերաբերում է միայն «D բաժնի դեղերին»: Այս դեղերը ձեռք են բերվում ցանցային դեղատնից: D բաժնում և ցանցում չներառված դեղերին սա չի վերաբերում: Բացառություն են կազմում այն անդամները, ովքեր ունեն ցանցից դուրս դեղերի հասանելիության իրավունք:

Անցումային քաղաքականություն

Ցանցային դեղատների միջոցով մենք կարող ենք ժամանակավորապես տրամադրել դեղերի տեղեկատուում չներառված D բաժնի դեղեր կամ դեղերի տեղեկատուում ներառված ապահովագրական սահմանափակումներ ունեցող դեղամիջոցներ: Սա նախատեսված է անդամի ընթացիկ կարիքները հոգալու համար: Սա նաև թույլ է տալիս ժամանակ շահել՝ դեղ նշանակողի հետ քննարկելու համար, թե որ դեղամիջոցով է հարմար փոխարինել տվյալ դեղը: Դեղամիջոցը պետք է փոխարինվի թերապևտիկ առումով համարժեք դեղով: Անդամները կարող են ներկայացնել իրենց համար բացառություն անելու հայց՝ ընթացիկ դեղամիջոցի ապահովագրությունը պահպանելու համար՝ հիմնավորելով բժշկական տեսանկյունից դրա անհրաժեշտությունը:

Y0118_24_493A_AM_C 08152024
H2819_24_493A_AM_C Accepted 08262024

Անցումային շրջանում դեղի տրամադրման մանրամասները.

- **Դեղերի տեղեկատուում չներառված դեղի անցումային շրջանում ժամանակավոր մատակարարումը կատարվում է** մեկանգամյա հիմքով, 30-օրյա ժամկետով: Անդամները դեղը պետք է ձեռք բերեն մանրածախ դեղատներից: Դա պետք է տեղի ունենա նոր անդամակցության առաջին 90 օրվա ընթացքում:
- Եթե դեղը նշանակված է ավելի քիչ օրերի համար, մենք կապահովենք դեղի մի քանի անգամ ստացումը՝ մինչև լրանա դեղի ստացման 30-օրյա ժամկետը:
- Դեղի նորից տրամադրումը կատարվում է մինչև լրանա 30-օրյա մատակարարման ժամկետը: Դա տեղի է ունենում, երբ դեղատոմսային դեղը տրամադրվում է նշանակվածից պակաս՝ անվտանգային սահմանափակումների պատճառով:
- 90-օրյա ժամկետը սկսվում է Medicare-ի D բաժնի ցանկացած պլանում ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելու օրվանից:

Ինչ անել անցումային շրջանում

90-օրյա անցումային շրջանում անդամները կարող են քննարկել իրենց դեղ նշանակողների հետ մեր կողմից փոխհատուցվող մեկ այլ դեղամիջոցի անցնելու մասին: Անդամները կարող են նաև դեղի համար բացառություն խնդրել: Բացառություն կարելի է խնդրել դեղամիջոցի փոխհատուցման համար, որը ներառված չէ մեր դեղերի տեղեկատուում կամ ունի սահմանափակումներ: Սահմանափակումների մեջ կարող են մտնել փուլային թերապիան կամ նախնական թույլտվությունը:

Ինչպես ձեռք բերել դեղի համար բացառություն կամ նախնական թույլտվություն

Բացառության կամ նախնական թույլտվության հետ կապված աջակցության հարցերով անդամները կարող են զանգահարել Հաճախորդների սպասարկման կենտրոն Blue Shield-ի անդամի ID քարտին նշված համարով:

- Ըստ անհրաժեշտության, Հաճախորդների սպասարկման կենտրոնը կվերահղի զանգը Դեղատնային ծառայություն՝ նախնական թույլտվության կամ բացառության հայցին ընթացք տալու համար:
- Ըստ պահանջի՝ մենք նախնական թույլտվության կամ բացառության հայցաձևեր կտրամադրենք անդամներին և դեղ նշանակողներին: Ձևաթղթերը կտրամադրվեն փոստով, էլփոստով կամ ֆաքսով: Անդամները կարող են ձևաթղթեր գտնել նաև մեր Նախնական թույլտվության ձևաթղթերի և ձևանմուշների վեբ էջում:
- Դեղերի տեղեկատուում ներառված դեղամիջոցների նախնական թույլտվության վերաբերյալ հայցերը համեմատվում են CMS-ի կողմից հաստատված փոխհատուցման ստանդարտների հետ: Դեղերի տեղեկատուում ներառված դեղամիջոցների բացառության վերաբերյալ հայցերը քննվում են բժշկական անհրաժեշտության տեսանկյունից Blue Shield-ի դեղագետների և բժիշկների կողմից:
- Եթե դեղերի տեղեկատուում ներառված դեղամիջոցի բացառության վերաբերյալ հայցը մերժվում է, մենք դեղ նշանակողին տրամադրում ենք Blue Shield of California-ի ուղեցույցը՝ դեղամիջոցի այլընտրանքներ գտնելու համար: Մենք անդամներին նամակ ենք ուղարկում՝ մեր որոշումը բողոքարկելու ուղեցույցով:

Եթե հաջորդ տարվա բացասական փոփոխությունն ազդում է անդամի վրա, մենք ապահովում ենք դեղերի տեղեկատուում չներառված դեղամիջոցի մինչև 30-օրյա ժամանակավոր տրամադրում: Դա կարող է կատարվել, եթե անդամին անհրաժեշտ լինի դեղամիջոցի նորից ստացում նոր պլանային տարվա առաջին 90 օրվա ընթացքում:

Դեղատներ և անցումային շրջանում դեղերի տրամադրում

Անդամներին օգնելու համար ստանալ իրենց անհրաժեշտ դեղերը մանրածախ և երկարատև խնամքի դեղատները կարող են երկարացնել դեղամիջոցի անցումային շրջանում տրամադրումը, եթե դեղամիջոցը.

- Ներառված չէ դեղերի տեղեկատուում,
- Ունի B և D բաժիններից տարբեր սահմանափակումներ,
- Ունի D բաժնի դեղերի ապահովագրական ծածկույթը բացառող սահմանափակումներ, կամ
- Ունի D բաժնի դեղամիջոցի անվտանգ օգտագործման հետ կապված սահմանափակումներ:

Մենք կփոխհատուցենք դեղի 30-օրյա տրամադրումը (եթե դեղը նշանակված է ավելի քիչ օրերի համար, մենք կապահովենք դեղի մի քանի անգամ ստացումը՝ մինչև լրանա դեղի ստացման 30-օրյա ժամկետը):

Մինչև տուն առաքման ծառայության երկարացումը (դեղամիջոցի ավելի քան 30-օրյա տրամադրման դեպքում) կորոշվի և կամրագրվի Blue Shield-ի անձնակազմի կողմից: Blue Shield-ի հայցերի մշակման ծառայություններ մատուցողը հիմնվում է Health Insurance Portability and Accountability Act-ի (HIPAA, Բուժապահովագրության տվյալների պահպանման և պաշտպանության իրավունքի մասին օրենք) ստանդարտների նոր տարբերակի վրա՝ ապահովագրական ծածկույթի անցումային շրջանի պահանջների հետ կապված որոշումներ կայացնելու համար: Նա օգտվում է այս ոլորտում ընդունված հաղորդակցման եղանակներով ուղարկված հաղորդագրություններից՝ ըստ անհրաժեշտության ճշտելու համար դեղատներ ուղարկված հայցերի հետ կապված տեղեկատվությունը:

Անցումային շրջանում դեղի տրամադրման ծախսերը

Սուբսիդավորման իրավունք և ցածր եկամուտ ունեցող (LIS) անդամների համար ծախսերի բաշխումը չի գերազանցի LIS-ի չափանիշներին համապատասխանող անդամների համավճարի առավելագույն գումարը: Սա վերաբերում է անցումային շրջանում դեղերի ժամանակավոր տրամադրմանը:

Բոլոր մյուս անդամների համար.

- Ծախսերի բաշխումը հիմնված է ծախսերի բաշխման հաստատված մակարդակների վրա: Այն համապատասխանում է այն գումարին, որն անդամից գանձվելու է դեղերի տեղեկատուում չներառված դեղերի համար, որոնց համար սահմանվել է ապահովագրական բացառություն:
- Անդամներից չի պահանջվում լրացուցիչ ծախսերի բաշխում՝ կապված D բաժնի դեղերի ավելի փոքր քանակությունների մի քանի անգամ ստացման հետ, որոնց համար անվտանգության նկատառումներից ելնելով գործում է քանակական սահմանաչափ, երբ որոշվել է, որ D բաժնի դեղերի սկզբնապես սահմանված դեղաչափը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է:

Անցումային շրջանում դեղի տրամադրումից հետո

Դեղի 30-օրյա ժամանակավոր տրամադրումից հետո մենք նորից չենք վճարի այդ դեղի համար՝ ըստ մեր անցումային շրջանի քաղաքականության: Բացառություն են կազմում անցումային շրջանում դեղի տրամադրման շրջանակներում ստացված պաշտպանված դասի դեղերը: Այն անդամները, ովքեր անցումային շրջանում պաշտպանված դասի դեղամիջոց են ստանում, պայմանագրային տարվա մնացած ժամանակահատվածում կշարունակեն օգտվել այս նպաստից:

Անցումային շրջանում դեղի տրամադրումից հետո.

- Մենք անդամին CMS-ի կողմից հաստատված ձևանմուշով գրավոր ծանուցում կուղարկենք ԱՄՆ առաջին կարգի փոստով՝ անցումային շրջանի դեղի տրամադրումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:
- Մենք դեղ նշանակողին ֆաքս կուղարկենք՝ անցումային շրջանում դեղի տրամադրման մասին ծանուցմամբ: Այս ծանուցումը կպարունակի հետևյալ տեղեկատվությունը.
  - Անցումային շրջանում դեղի ստացման ժամանակավոր բնույթի մասին բացատրություն
  - Ինչպես աշխատել մեզ հետ և դեղ նշանակողի հետ՝ մեր դեղերի տեղեկատուում դեղամիջոցի այլընտրանքներ գտնելու համար
  - Դեղամիջոցի համար բացառություն պահանջելու անդամի իրավունքի մասին բացատրություն
  - Դեղերի տեղեկատուում ներառված դեղի համար բացառություն պահանջելու ընթացակարգի նկարագրությունը
- Եթե անցումային շրջանում դեղը տրամադրվել է մեկ անգամ, և անդամը գտնվում է փոխհատուցման վերաբերյալ որոշման կայացման գործընթացում, ապա անցումային շրջանում դեղի տրամադրումը կարող է երկարաձգվել ևս 30-օրով՝ սկզբնական 30-օրյա տրամադրումից հետո, եթե անդամը չի ներկայացնում գրավոր դեղատոմս, որտեղ դեղը նշանակված է 30 օրից պակաս ժամկետով:

Երկարատև խնամքի (LTC) հաստատություններում գրանցված անդամներ

Այն անդամի համար, ով հանդիսանում է LTC հաստատության (օրինակ՝ ծերանոցի) բնակիչ.

- Մենք կփոխհատուցենք անցումային շրջանում D բաժնի դեղերի 31-օրյա ժամկետով տրամադրումը (եթե դեղը նշանակված չէ ավելի քիչ օրերի համար)՝ 14 օր կամ ավելի պակաս ժամկետով հավելյալ տրամադրմամբ: Դա կատարվում է առաջին 90 օրվա ընթացքում, երբ նոր անդամը գրանցվում է մեր պլանում: 90-օրյա ժամկետը սկսվում է անդամի ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելու օրվանից: Հիշեցման կարգով մենք անդամին կուղարկենք անցումային շրջանում դեղերի տրամադրման վերաբերյալ ծանուցում: Այս ծանուցումը կուղարկվի անցումային շրջանում առաջին հավելյալ դեղամիջոցի տրամադրումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:
- Եթե LTC-ի բնակիչը գրանցվել է մեր պլանում ավելի քան 90 օր և դեղերի տեղեկատուում չներառված դեղամիջոցի կամ այլ սահմանափակումների (օրինակ՝ փուլային թերապիայի կամ դեղաչափի սահմանափակումների) ենթակա դեղամիջոցի կարիք ունի, մենք կփոխհատուցենք այդ դեղի ժամանակավոր 31-օրյա ժամկետով արտակարգ իրավիճակում տրամադրման համար (եթե դեղը նշանակված չէ ավելի քիչ օրերի համար): Անդամն այս ընթացքում պետք է զբաղվի դեղերի տեղեկատուում ներառված դեղի համար բացառություն պահանջելու հարցով:
- LTC հաստատություն ընդունվող կամ այնտեղից դուրս եկող անդամների համար դեղերի նորից տրամադրման վաղ փոփոխությունները կիրառելի չեն: Դա արվում է՝ սահմանափակելու համար անհրաժեշտ հասանելիությունը դեղերի տեղեկատուին: Այս գրանցված անդամներին թույլատրվում է հասանելի լինել դեղերի նորից տրամադրմանը LTC հաստատություն ընդունվելու կամ այնտեղից դուրս գալու ժամանակ:

Հարցե՞ր ունեք

Հարցերի դեպքում զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ անդամի ID քարտին նշված համարով: Մենք սիրով ձեզ կօգնենք:

Լեզվական աջակցության մասին ծանուցում

For assistance in English at no cost, call the toll-free number on your ID card. You can get this document translated and in other formats, such as large print, braille, and/or audio, also at no cost. Para obtener ayuda en español sin costo, llame al número de teléfono gratis que aparece en su tarjeta de identificación. También puede obtener gratis este documento en otro idioma y en otros formatos, tales como letra grande, braille y/o audio. 如欲免費獲取中文協助，請撥打您 ID 卡上的免費電話號碼。您也可免費獲得此文件的譯文或其他格式版本，例如：大字版、盲文版和/或音訊版。 Հայերեն լեզվով անվճար օգնության համար զանգահարեք ձեր ID քարտին նշված անվճար հեռախոսահամարով: Դուք կարող եք անվճար ստանալ այս փաստաթուղթը թարգմանված և այլ ձևաչափերով, օրինակ՝ խոշոր տպագիր, բրայլյան գրատեսակով և/կամ աուդիո ձևաչափով:

Խտրականության բացառման մասին ծանուցում

The company complies with applicable state laws and federal civil rights laws and does not discriminate, exclude people, or treat them differently on the basis of race, color, national origin, ethnic group identification, medical condition, genetic information, ancestry, religion, sex, marital status, gender, gender identity, sexual orientation, age, mental disability, or physical disability. La compañía cumple con las leyes de derechos civiles federales y estatales aplicables, y no discrimina, ni excluye ni trata de manera diferente a las personas por su raza, color, país de origen, identificación con determinado grupo étnico, condición médica, información genética, ascendencia, religión, sexo, estado civil, género, identidad de género, orientación sexual, edad, ni discapacidad física ni mental. 本公司遵守適用的州法律和聯邦民權法律，並且不會以種族、膚色、原國籍、族群認同、醫療狀況、遺傳資訊、血統、宗教、性別、婚姻狀況、性別認同、性取向、年齡、精神殘疾或身體殘疾而進行歧視、排斥或區別對待他人。 Ընկերությունը հետևում է գործող նահանգային և քաղաքացիական իրավունքների պաշտպանության դաշնային օրենքներին և խտրականություն չի դնում, չի բացառում մարդկանց կամ այլ կերպ չի վերաբերվում նրանց՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, էթնիկ պատկանելության, առողջական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ծագման, կրոնի, սեռի, ամուսնական կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման, տարիքի, հոգեկան խնդիրներ ունենալու կամ ֆիզիկական հաշմանդամության հիմքերով: